ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան - 10, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

«26» 03 2012թ. №02/02.15/4242-12

"Ինֆորմացիոն ազատության կենտրոն"
հասարակական կազմակերպության
նախագահ տիկին Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 21.03.2012 թվականի 166-ի 8 գրության տեղեկացնում ենք, որ 2009-2011 թվականների ընթացքում ՀՀ կառավարության գործունեության համար ստեղծվել և վերամշակվել են հետևյալ կայքերը՝

1. 12.02.2010 թվականին վերամշակվել է ՀՀ կառավարության պաշտոնական վեբ կայքի www.gov.am, որի համար ՀՀ կառավարության աշխատակազմի "Տնտեսական բարեփոխումների տեղեկատվական վերլուծական կենտրոն" ՊՈԱԿ-ի միջոցներից ծախսվել է 2,070,000 դրամ:
2. 2010 թվականին գործարկվել է ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքը, որ մեծ մասը գործարկվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ներքին ռեսուրսների հաշվին, իսկ երկու առանձին բաժիններ "Ինտերակտիվ բյուջե" ստեղվել է 2010 թվականի մայիսին (ծախսվել է 7,465,000 դրամ) և "Լիցենզիաների հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգ" ստեղծվել է 2010 թվականի դեկտեմբեր ամսին (ծախսվել է 7,481,875 դրամ): Ֆինանսավորումն իրականացվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող "Պետական հատվածի արդիականացման ծրագրի" միջոցներով:
3. 2011 թվականին գործարկվել է www.report.gov.am կայքը, որի համար ծախսվել է 800,000 դրամ ՀՀ կառավարության աշխատակազմի միջոցների հաշվին:

Հարգանքով՝
Աշխատակազմի ղեկավարի
տեղակալ Արամ Բաղալյան